ՀՏԴ 343

Իրավագիտություն

Տաթևիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ի.գ.թ., ԱրՊՀ իրավունքի ամբիոն

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԸՍՏ ԱՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Մեկ անձի կողմից մի քանի հանցավոր արարքների կատարումը հատուկ ուշադրություն է պահանջում պետությունից, քանի որ յուրաքանչյուր նոր հանցագործությամբ աճում է անձի կողմից հասարակությանը պատճառվող վնասի չափը: Նման հանցավոր դրսևորումներին հակազդելու անհրաժեշտությունը պայմանավորում է հանցագործությունների բազմակիության հասկացության գիտական և գործնական մշակումը: Դրա վերաբերյալ նորամուծություն է ՀՀ նոր քրեական օրենսգրքում այդ ինստիտուտի ամրագրումը և հասկացության սահմանումը:

Բանալի բառեր՝ հանցագործությունների բազմակիություն, հանցագործությունների համակցություն, կրկնակիություն, ռեցիդիվ, քրեական օրենսդրություն, նոր քրեական օրենսգիրք:

Т.Геворгян

ИНСТИТУТ МНОЖЕСТВЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ ПО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРЦАХ И ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Совершение одним лицом нескольких преступлений требует от государства особого к себе отношения, поскольку с каждым новым преступлением растет вред, причиняемый данным лицом обществу. Необходимость противодействия таким преступным проявлениям обусловливает научную и практическую разработку понятия множественности преступлений. Новшеством в этом отношении является закрепление этого института и определение этого понятия в новом Уголовном кодексе Республики Армения.

Ключевые слова: множественность преступлений, совокупность преступлений, повторность, рецидив, уголовное законодательство, новый Уголовный кодекс.

T.Gevorgyan

INSTITUTE OF MULTIPLE CRIMES UNDER THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARTSAKH AND THE DRAFT NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

To tackle multiple crimes perpetrated by one person requires a different approach by the government, because the damage caused to society by the person increases with each new crime. The necessity to combat such criminal manifestations determines the scientific and practical development of the concept of multiple offences. There is an innovation connected with it. The new Criminal Code of RA fixed that institute and set the concept.

Key words: multiple offences, cumulative offences, repitition of crimes, recidivism, criminal legislation, the new Criminal code.

Հանցագործությունների բազմակիությունը սկսել են ուսումնասիրել անցյալ դարի 60-ականների վերջերից[1]: Այն հանդիսանում է քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Ո՛չ գործող, ո՛չ էլ նախկին քրեական օրենսդրությունները չեն տվել հանցագործությունների բազմակիության հասկացությունը՝ ի տարբերություն ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի:

Տեսության մեջ ընդունված է այն տարբերակը, որ հանցագործությունների բազմակիություն է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների կատարումը, եթե չեն վերացել քրեաիրավական կամ քրեադատավարական հետևանքները. անձը չի ազատվել պատասխանատվությունից քրեական օրենքով սահմանված կարգով կամ չի մարվել կամ հանվել դատվածությունը, կատարված երկու հանցագործությունների կապակցությամբ առկա է քրեական վարույթը կամ քրեական հետապնդումը իրականացնելու քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքը:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծն առաջին անգամ ամրագրել է բազմակիության հասկացությունը՝

Հոդված 51. Հանցագործությունների բազմակիության հասկացությունը և տեսակները

1. Հանցագործությունների բազմակիություն է համարվում միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելը:

2. Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը:

3. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է, եթե նախորդ հանցագործության համար մարվել կամ վերացվել է դատվածությունը, կամ

---

[1] *Տե՛ս* ***Галиакбаров Р. Р., Фролов Е. А.*** *Множественность преступных деяний как институт советского уголовного права : учеб. пособие. Свердловск, 1967:*

անձն օրենքով սահմանված կարգով ազատվել է քրեական պատասխանատվությունից:

4. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է մեկ տևող կամ շարունակվող հանցագործության դեպքում:

5. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում: [1]

Ուսումնասիրելով հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ տարիներով քրեաիրավական տեսության մեջ ձևավորված նույն բազմակիության հասկացությունն է, ուղղակի բաղադրիչների բաժանված: Շատ ողջունելի է վերոնշյալի օրենսդրորեն ամրագրումը, ինչը, մեր կարծիքով, առավելագույնս կլուծի բազմակիության հասկացության վերաբերյալ մասնագետների վիճաբանությունների հարցը:

Ինչ վերաբերում է հոդվածի երկրորդ մասին, որն ամրագրում է բազմակիության տեսակները, նշենք, որ սկզբնական շրջանում դրանք երեքն էին՝ հանցագործությունների կրկնակիություն, հանցագործությունների համակցություն և հանցագործությունների ռեցիդիվ, սակայն, ինչպես գիտենք, օրենսդրական փոփոխությունների արդյունքում, կրկնակիության ինստիտուտը հանվել է բազմակիության տեսակների շարքից (ՌԴ – ում՝ 2003թ., ՀՀ – ում՝ 2011թ., ԼՂՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 2013թ., որտեղ ի սկզբանե կրկնակիությունը նախատեսված չէր):

Քրեական իրավունքի գիտության մեջ հանցագործությունների բազմակիության ինքնուրույն ձև է համարվում նաև դատավճիռների համակցությունը, ինչը դեռ խորը ուսումնասիրության կարիք ունի[2]: Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ գոյություն ունեն երկու և ավելի հանցանքների կատարման այնպիսի դեպքեր, որոնք ընդգրկվում են միայն դատավճիռների համակցության մեջ, օրինակ, երբ դիտավորյալ հանցագործության համար պատիժ կրող անձը կատարում է անզգույշ հանցագործություն, կամ անզգույշ հանցագործության համար պատիժ կրող անձը կատարում է դիտավորյալ հանցագործություն:

Ինչ վերաբերում է քննվող հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն՝ հանցագործությունների բազմակիությունը բացակայում է մեկ տևող կամ շարունակվող հանցագործության դեպքում, նշենք, որ հանցագործությունների որակման համար կարևոր նշանակություն ունի հանցագործության բազմակիության տարբերակումը մեկ ամբողջական հանցագործությունից: Հանցագործությունների բազմակիությունը, այսինքն՝ անձի կողմից մի քանի

---

[1] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 17:*

[2] *Տե՛ս* ***Малков В. П., Чернова Т. Г.*** *, Совокупность приговоров и применение наказания /Вопросы законадательного регулирования, теории и практики/. Казань, 2003, էջ 30-32:*

հանցագործությունների կատարումը, ծնում է մի շարք յուրահատուկ իրավական հարցեր, որոնք հարկ է լինում լուծել բազմակիության քրեաիրավական որակման ժամանակ[1]:

Հանցավոր արարքի ճիշտ որակման համար կարևոր է պարզել՝ կոնկրետ դեպքում առկա՞ է մեկ միասնական (բարդ) հանցագործություն, թե՞ հանցագործությունների բազմակիություն: Շատ կարևոր է նման դեպքերում չխախտել նաև կրկնակի դատապարտման արգելքը. խնդիր, որը ծագում է հանցագործությունների բազմակիությամբ արարքները որակելու գրեթե բոլոր դեպքերում:

Շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը կազմված է հաջորդաբար կատարվող միաբնույթ (նույնական) հանցավոր արարքներից, որոնք ուղղված են ընդհանուր նպատակի իրականացմանը և միավորված են մեկ միասնական դիտավորությամբ:[2]

Շարունակվող հանցագործության օրենսդրական բնորոշումը տրված էր ՀՀ 2003թ. ՔՕ 21-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ շարունակվող էր համարվում միասնական հանցավոր մտադրությամբ միավորված երկու կամ ավելի արարքներից բաղկացած հանցագործությունը: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 23.05.11թ. ՀՕ-143-Ն օրենքով քրեական օրենսգրքի նշված հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Հետևաբար, ՀՀ ՔՕ վերացվեց նաև շարունակվող հանցագործության օրենսդրական ձևակերպումը:

Սակայն, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 25-րդ կետով տրվում է շարունակվող հանցագործության հասկացությունը, որի համաձայն՝ շարունակվող հանցագործություն է մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումը:[3]

Կարելի է առանձնացնել շարունակվող հանցագործության հետևյալ հատկանիշները.

1. Անձը կատարում է մի քանի հանցավոր արարքներ,
2. Շարունակվող հանցագործություն կազմող արարքները կատարվում են հաջորդաբար,
3. Կատարվող արարքները համարվում են իրավաբանորեն նույնաբնույթ, այսինքն՝ ուղղված են մեկ օբյեկտի դեմ, կատարվում են միևնույն օբյեկտիվ կողմով, սակայն փաստական հատկանիշներով կարող են տարբերվել,

---

[1] *Տե՛ս **Գրիգորյան Մ.Վ.**, Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան 2007թ. էջ 331:*

[2] ***Մելիքսետյան Ա.Ս.** , <<Հանցագործությունների բազմակիություն.հասկացությունը,տեսակները,օրենսդրական կարգավորումը և դրա կատարելագործման ուղիները>> Ատենախոսություն, Երևան, 2010, էջ 18*

[3] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 3*

4. Արարքները միավորված են մեկ նպատակով և այդ պատճառով հանդես են գալիս որպես ամբողջի մասեր,

Արարքները, որոնք կազմում են շարունակվող հանցագործությունը, կարող են համարվել *ինքնուրույն ավարտված հանցագործություն:* Բայց, նույնիսկ այն դեպքում, երբ առանձին դրվագներն իրենք իրենցով հանցավոր են, դրանք չեն կարող ստանալ ինքնուրույն քրեաիրավական գնահատական, քանի որ համարվում են հանցավորի միասնական հանցավոր դիտավորության իրականացման <<փուլեր>>: Եթե հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի հասնում իր վերջնական նպատակին, ապա արարքը որակվում է որպես մտադրված հանցագործության փորձ:

Տևող հանցագործության բնորոշումը ոչ ՀՀ գործող քրեական օրենսգրքում, ոչ էլ ԼՂՀ քրեական օրենսգրքում տրված չէ: Այն պարզաբանված է քրեական իրավունքի տեսության մեջ, համաձայն որի՝ տևող հանցագործություն է համարվում գործողությունը կամ անգործությունը, որն արտահայտվում է տևական ժամանակահատվածում անձի կողմից կոնկրետ հանցավոր արարքի հանցակազմի անընդմեջ կատարմամբ[1]:

Սակայն, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 24-րդ կետով տրվում է տևող հանցագործության հասկացությունը, որի համաձայն՝ տևող հանցագործություն է տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացումը:[2]

Տևող հանցագործությունը սկսվում է գործողության (օրինակ՝ փախուստ ազատազրկման վայրից) կամ անգործության (օրինակ՝ պատիժը կրելուց խուսափելը) պահից և ավարտվում է կամ հանցավորի կողմից մեղայականով ներկայանալով, կամ իրավապահ մարմինների կողմից հանցագործի ձերբակալումով, կամ պարտականության վերացմամբ կամ այլ հանգամանքների ուժով արարքը դադարեցնելով: Տևող հանցագործությունը շարունակվող հանցագործությունից տարբերվում է նրանով, որ կատարվում է մեկ արարքով, որը տևում է երկար ժամանակ:

Քննարկվող հոդվածի 5-րդ կետն ամրագրում է, որ հանցագործությունների բազմակիությունը բացակայում է օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում: Ընդհանրապես, քրեաիրավական նորմերի մրցակցության հարցը երկար ժամանակ է, ինչ գտնվում է քրեագետների ուշադրության կենտրոնում, դրա մասին կխոսենք առանձին գիտահետազոտական աշխատանքի մեջ:

Ամփոփելով վերոնշյալը՝ նշենք ևս մեկ անգամ, որ ողջունելի է ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում բազմակիության, տևող և շարունակվող հանցագործությունների հասկացությունների օրենսդրորեն ամրագրումը

---

[1] *Российское уголовное право. Общая часть. М., 2007, էջ 281:*

[2] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 3*

(հոդված 3-ի 24, 25-րդ կետեր, հոդված 51), ինչը, մեր կարծիքով, արդյունավետ կլինի պրակտիկայում հանդիպող վիճահարույց իրավիճակների լուծման հարցում՝ հանցավոր արարքների ճիշտ որակման հետ կապված:

Գրականություն

1. ԼՂՀ քրեական օրենսգիրք, 2013:
2. ՀՀ քրեական օրենսգիրք, 2021:
3. **Գրիգորյան Մ.Վ.**, Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2007թ.:
4. **Մելիքսեթյան Ա.Ս.**, <<Հանցագործությունների բազմակիություն. հասկացությունը, տեսակները, օրենսդրական կարգավորումը և դրա կատարելագործման ուղիները>> Ատենախոսություն, Երևան – 2010.
5. **Галиакбаров Р. Р.**, Фролов Е. А. Множественность преступных деяний как институт советского уголовного права : учеб. пособие. Свердловск, 1967.
6. **Малков В. П., Чернова Т. Г.**, Совокупность приговоров и применение наказания /Вопросы законадательного регулирования, теории и практики/. Казань, 2003.
7. Российское уголовное право. Общая часть. М., 2007.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը: